Տարեկան հաշվետվություն

2021

Բովանդակություն

01 Ընկերության մասին

4 Ընդհանուր տեղեկատվություն
5 Տեսլականը, առաքելությունը
6 Հիմնական արժեքները
8 Բաժնետերեր և ղեկավարություն
12 Տնօրենի ուղերձը
13 Միջազգային գործընկերներ
14 Զարգացումներ և ձեռքբերումներ

02 Ռազմավարական հաշվետվություն

17 ՀՀ տնտեսություն և կապիտալ շուկաներ
20 Մեր անձնակազմը
21 Ռիսկերի կառավարում

03 Ֆինանսական հաշվետվություններ

23 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
24 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
25 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Գլուխ 1

Ընկերության Մասին

2021

Ընդհանուր տեղեկատվություն

«Դայմենշն» ՓԲԸ-ն ներդրումային ընկերություն է, որի նպատակն է հաճախորդներին մատուցել բարձրորակ ծառայություններ՝ առաջնահերթությունը տալով հաճախորդի շահերին: Ընկերությունը մատուցում է օրենքով և այլ իրավական ակտերով ներդրումային ընկերություններին թույլատրված ֆինանսական ծառայություններ:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է կորպորատիվ կառավարման միջազգայնորեն ճանաչված նորմերով և որոշումների կոլեգիալ ընդունման սկզբունքներով:

Հիմնական գործունեություն

- Խորհրդատվություն կապիտալի շուկաներում
- Արժեթղթերի գործառնություններով պայմանավորված ծառայություններ
- Ակտիվների կառավարում

Այլ մասնակցություն

- Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի Հաշվի օպերատոր
- Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ

Ընկերությունը գրանցված է և վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (լիցենզիա 0014):

Տեսլականը եւ առաքելությունը

Տեսլական

Դայմենշնի տեսլականն է դառնալ Հայաստանի Հանրապետությունում առաջատար ներդրումային ընկերություն՝ հաճախորդներին տրամադրելով բարձրակարգ և միջազգային որակի ֆինանսական ծառայություններ:

Առաքելություն

Հայաստանում ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտում գործել որպես հուսալի, խորաթափանց և արդյունավետ գործընկեր՝ առաջնահերթությունը տալով հաճախորդի շահերին և պահպանելով բարձր բարեվարքություն:

Հիմնական արժեքներ

Որակյալ աշխատանք և բարձր պրոֆեսիոնալիզմ

Մենք առաջարկում ենք ֆինանսական և ներդրումային ծառայությունների լայն ընտրանի, ապահովում ենք մատուցված ծառայությունների բարձր որակ՝ առաջնահերթությունը տալով հաճախորդի շահերին: Մենք ցուցաբերում ենք անհատական մոտեցում յուրաքանչյուր գործընկերոջը և հաճախորդին՝ կառուցելով կայուն և երկարատև հարաբերություններ: Ընկերությունն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման միջազգայնորեն ճանաչված նորմերով և որոշումների կոլեգիալ ընդունման սկզբունքներով:

Գաղտնիության պահպանում

Մենք խիստ կարևորում ենք մեր հաճախորդների անձնական տվյալների գաղտնիության պահպանումը: Ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ՝ մենք երաշխավորում ենք պահպանել հաճախորդների և գործընկերների վերաբերյալ տեղեկատվությունը:

Մեր թիմի աշխատակիցները կիսում են ընդհանուր արժեքներ և հավատարիմ են ընկերության որդեգրած ռազմավարությանը: Դայմենշն ընկերության աշխատակիցները թիմային են, նվիրված ու համախմբված, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում յուրաքանչյուր նախագիծ և աշխատանք հավուր պատշաճի իրականացնելու համար: Մենք կիսում ենք միմյանց հետ մեր փորձառությունը՝ ստեղծելով արդյունավետ գործընկերային հարաբերություններ:

Կարևորելով մեր համբավը՝ մենք բարձր ենք գնահատում վստահությունը, ազնվությունը և գործնական էթիկան: Մենք ձգտում ենք դառնալ կայուն և վստահելի ֆինանսական կառույց ՀՀ ֆինանսական շուկայում, որը ներդրողներին ծառայություններ մատուցելիս գործում է ֆիդուցիար պարտականությունների շրջանակում:

Բաժնետերեր եւ ղեկավարություն

Տնօրենների խորհուրդ

Դավիթ Հակոբյան

Բաժնետեր և խորհրդի նախագահ

Կարել Քրիս Հոֆստրա

Բաժնետեր և խորհրդի անդամ

Էդգար Համբարյան

Խորհրդի անդամ

Բաժնետերեր եւ ղեկավարություն

Բաժնետերեր

Դավիթ Հակոբյան

Կարել Քրիս Հոֆստրա

Արմեն Գրիգորյան



Բաժնետերեր եւ ղեկավարություն

Դավիթ Հակոբյան

Բաժնետեր և խորհրդի նախագահ

Դավիթը մասնագիտացած է ֆինանսահիրավական, ինչպես նաև ընկերությունների compliance ոլորտում, մարդու իրավունքները բիզնեսում, սոցիալական պատասխանատվություն, հակակոռուպցիոն քաղաքականություն: Մինչև «Դայմենշն» ՓԲԸ-ն հիմնադրելը Դավիթն աշխատել է «Դելոյթ Արմենիա» ընկերությունում որպես իրավաբանական ծառայությունների մենեջեր: Դավիթը ստացել է իրավունքի մագիստրոսի աստիճան Փարիզ 1 Փանթեոն-Սորբոն համալսարանից, ինչպես նաև ավարտել է իրավաբանական պրակտիկայի դասընթացը (LPC) Լոնդոնի BPP իրավաբանական դպրոցում: Նա Հայաստանում, Անգլիայում և Ուելսում արտոնագրված փաստաբան է:

Կարել Քրիս Հոֆստրա

Բաժնետեր և խորհրդի անդամ

Կարելը Միգրացիայի քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ICMPD) Հայաստանի գրասենյակի ղեկավարն է: Կարելը զբաղեցրել է Եվրոպական Միության կողմից ներգաղթի և ինտեգրման գրասենյակի կողմից ֆինանսավորվող Հայաստանի նպատակին նախաձեռնությունների ծրագրի ղեկավարի պաշտոնը: Բացի այդ, նա եղել է Քաունթերփարթ ինթերնեշնլի (ԱՄՆ ՄԶԳ-ի իրականացման գրասենյակ) հայաստանյան գրասենյակի ղեկավարը: Կարելը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության պատվո հյուպատոս, իսկ նախկինում նաև՝ ԵԱՀԿ փոխդեսպան:

Բաժնետերեր եւ ղեկավարություն

Արմեն Գրիգորյան

Բաժնետեր և խորհրդատվական խմբի նախագահ

Արմեն Գրիգորյանը ֆինանսական ոլորտում ունի առավել քան քսան տարվա փորձ: Ծառայել է տասնյոթ ընկերությունների խորհրդում: ԱՄՆ-ի երկու ներդրումային ընկերությունների՝ «Defoe Redmount» (1994թ.) «Redmount Capital Partners» (2004 թ.) հիմնադիր և համահիմնադիր է: Ընկերությունները մշակում են բարդ ներդրումային ռազմավարություններ և ղեկավարում են հաճախորդների, և փոխկապակցված բիզնես գործընկերների ներդրումները: «Defoe Redmount» ընկերությունը կառավարում է ավելի քան հինգ հարյուր միլիոն դոլարի ակտիվներ իր դիվերսիֆիկացված ներդրումային ուղղություններում:

Միքայել Մարգարյան

Գլխավոր տնօրեն

Մինչև «Դայմենշն» ՓԲԸ-ին միանալը Միքայելը «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում զբաղեցրել է Ավանդների և կորպորատիվ հաճախորդների ներգրավման, այնուհետև՝ Բիզնեսի զարգացման վարչության ղեկավարի պաշտոնները: Միքայելը ֆինանսահիրավական մասնագետ է արժեթղթերի կառուցվածքի որոշման, թողարկման, ինչպես նաև կորպորատիվ գործառնությունների գրանցման գծով: Միքայելը ստացել է մագիստրոսի աստիճան Հայաստանի ամերիկյան համալսարանի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների բաժնից, իսկ բակալավրի աստիճանը՝ ԵՊՀ համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետից:

ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Միքայել Մարգարյան

Գլխավոր տնօրեն

2021 թվականին, ըստ «Դայմենշն» ՓԲԸ-ի (այուսհետ՝ ընկերություն) կանխատեսումների, կսկսի ՀՀ տնտեսության աստիճանական վերականգնումը, որի ամբողջական վերականգնմանը հնարավոր կլինի հասնել 2022-2023 թվականներին:

Ընկերությունը նախատեսում է ունենալ գործընկերների լայն շրջանակ՝ շեշտադրելով ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Այս նպատակով ընկերությունն ակտիվ գործունեություն կծավալի ինչպես գործընկերների առաջնային խումբ համարվող ՀՀ ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, այնպես էլ միջազգային կառույցների հետ ներդրումային ծրագրերով համագործակցության ուղղությամբ:

Իր առջև դրված նպատակներին հասնելու համար ընկերությունն առաջնորդվելու է կազմակերպության զարգացման էվոլյուցիոն և ինստիտուցիոնալ զարգացման սկզբունքներով: Ընկերության ապագա ժամանակաշրջանի գերնպատակներից է ներգրավել իր կազմում ինստիտուցիոնալ գործընկեր, որը հնարավորություն կտա ընկերությանը բարձրացնել ծառայությունների մատուցման մակարդակը՝ ընդլայնելով մատուցվող ծառայությունների շրջանակը և ծավալը:

Ընկերությունն իր բաժնետերերի, ղեկավարների և աշխատակիցների կողմից ցուցաբերած ճկունության և հեռատեսության շնորհիվ կարճ ժամանակահատվածում ամրապնդել է իր դիրքերը ՀՀ ֆինանսական շուկայում՝ ներդրողների և գործընկերների համար լինելով վստահելի ֆինանսական գործընկեր, որն էլ հանդիսանում է ընկերության առաքելությունը: Եվ չնայած մարտահրավերներով լի տարվան՝ Դայմենշնը ոչ միայն կարողացավ ապահովել ընկերության անխափան աշխատանքը, այլև պահպանեց առաջատար դիրքերը շուկայում:

Շնորհակալ ենք վստահության համար:

Մ. Մարգարյան

Միջազգային գործընկերներ

«Defoe Redmount» ընկերությունը գործունեություն է ծավալում ԱՄՆ-ի երեք նահանգներում՝ Կալիֆորնիա, Տեխաս և Նյու Ջերսի, և Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում:
Ընկերությունն ունի 90-ից ավելի աշխատակից և կառավարում է ավելի քան 500 միլիոն ԱՄՆ դոլարի ակտիվներ՝ դիվերսիֆիկացված ներդրումային ուղղություններում: Ընկերությունը համաներդրել է 250 միլիոն ԱՄՆ դոլարից ավել մասնավոր բաժնետոմսային ներդրումային ուղղություններում:

«Adriatic Capital Partners» ընկերությունը հիմնադրվել է «InterFinance Group» ընկերության և «Defoe Redmount» ընկերության համաներդրմամբ: Ընկերությունը զբաղվում է մասնավոր բաժնեմասային ներդրումներով Եվրոպայի Ադրիատիկ շրջանում:

Լոնդոնյան «RVS Solicitors»-ը իրավաբանական ընկերություն է, որի ծառայությունների շրջանակը ներառում է այն ամենը, ինչի կարիքն ունեն հաճախորդները ժամանակակից աշխարհում: Ընկերությունում աշխատում են փորձառու մասնագետներ, որոնք մատուցում են իրավաբանական ծառայություններ ներգաղթի, ընտանեկան, քաղաքացիական դատավարության և այլ ոլորտներում:

Զարգացումներ եւ ձեռքբերումներ

Ընկերությունը արձանագրել է մի շարք զարգացումներ, դրական արդյունքներ և հաջողություններ:

- Զսպողական դրամավարկային քաղաքականության միջավայրում դիլերների թիմը հաջողությամբ կառավարել է պորտֆելի ռիսկը և պահպանել բավարար իրացվելիություն՝ կորուստները հասցնելով նվազագույնի և պահպանելով առաջատար դիրքը ներդրումային ընկերությունների շուկայում:
- Դայմենշնն ընտրվել է «Ակբա բանկ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի միակ շուկա ստեղծողը (market maker):
- Ընկերությունը ներգրավել է օտարերկրյա ներդրողների՝ միաժամանակ համագործակցություն հաստատելով ամերիկյան և եվրոպական ներդրումային ընկերությունների հետ:
- Իրականացվել է մատուցվող ծառայությունների շրջանակի թարմացում և ընդլայնում, որի արդյունքում շեշտը դրվել է ներդրումային ծառայությունների մատուցման վրա, այդ թվում տեղաբաշխում, մարքեթ մեյքինգ, IPO խորհրդատվություն և այլն:

Զարգացումներ եւ ձեռքբերումներ

Ընկերությունն արձանագրել է մի շարք զարգացումներ, դրական արդյունքներ և հաջողություններ:

- Անձնակազմը ընդլայնվել է և համալրվել լիցենզավորված աշխատակիցներով:
- Ընկերության աշխատակից Գայանե Արզումանյանն արդեն երկրորդ տարին անընդմեջ ճանաչվել է հաղթող Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից AMX մրցանակաբաշխության Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի լավագույն աշխատակից անվանակարգում:
- Ռեեստրավարման ծառայություններից օգտվող ակտիվ հաճախորդների թիվը կրկնապատկվել է, ինչի արդյունքում Դայմենշնը ամրապնդել է իր դիրքերը դեպոզիտար ծառայությունների օպերատորների շարքում:



Գլուխ 2

Ռազմավարական Հաշվետվություն

2021

ՀՀ տնտեսություն եւ կապիտալ շուկաներ



Ճգնաժամի և պատերազմի ծանր պայմաններում 2020թ.-ին ՀՀ տնտեսությունը ծանր հարված է կրել (-7.2%), մասնավորապես առավել մեծ չափով տուժել են կացության և հանրային սննդի կազմակերպումը (-45.01%), վարչարարական և օժանդակ գործունեությունը (-43.46%) և փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտը (-34.07%): Շոկային միջավայրից անցման և տնտեսական հարաբերական կայունացման արդյունքում 2021թ.-ին ՀՆԱ-ն որոշ չափով վերականգվել է (5.7%): Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) կանխատեսումներով, իրական ՀՆԱ աճը 2022թ.-ին կազմելու է 1.5%, որն արտացոլում է տնտեսության վերականգնման սպասվածից ավելի դանդաղ տեմպը:

ՀՀ տնտեսություն եւ կապիտալ շուկաներ

Ինչպես ՀՆԱ-ի դեպքում, այնպես էլ միջազգային առևտրի ոլորտում 2021թ. նկատվել է էական կայունացում, և նույնիսկ՝ աճ: Այսպիսով, 2021թ. արտահանումը աճել է 19.1%-ով, իսկ ներմուծման ծավալներում գրացնվել է 16.9% աճ: Հաշվի առնելով, որ ՀՀ հիմնական և ամենամեծ առևտրային գործընկերը Ռուսաստանի Դաշնությունն է, կանխատեսվում է, որ տարածաշրջանային լարված վիճակը 2022թ. հանգեցնելու է առևտրային խաթարումների և ծավալային նվազումների:



ՀՀ տնտեսություն եւ կապիտալ շուկաներ



Միաժամանակ, համաշխարհային պահանջարկի վերականգնման վերաբերյալ դրական սպասումներով, միջազգային ֆինանսական շուկաներում աննախադեպ բարձր իրացվելիության մակարդակով, ինչպես նաև առաջարկի որոշ գործոններով պայմանավորված, սննդի և ապրանքահումքային միջազգային շուկաներում գնաճային զարգացումները նպաստել են տարեվերջին Հայաստանում ներմուծված գնաճի արագացմանը: ՀՀ դրամի կայունությունը տեղական և միջազգային շուկաներում պահպանելու, ինչպես նաև 4% տարեկան գնաճային թիրախից կտրուկ չշեղվելու նպատակով ԿԲ-ն շարունակել է պարբերաբար օգտագործել իր գործիքակազմը, ներառյալ վերաֆինանսավորման տոկոսադրույքը և բաց շուկայական գործառնություններ (ռեպո գործարքներ, արտարժույթի ներգրավման սվոփ):

ԱՆՁՆԱԿԱԶՄ

Մեր թիմի աշխատակիցները կիսում են ընդհանուր արժեքներ և հավատարիմ են ընկերության որդեգրած քաղաքականությանը: Դայմենշն ընկերության աշխատակիցները թիմային են, նվիրված ու համախմբված, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում յուրաքանչյուր նախագիծ և աշխատանք հավուր պատշաճի իրականացնելու համար:

Կարևորելով աշխատակիցների մոտիվացիան և զարգացումը՝ ընկերությունը մշտապես հոգում է նրանց վերապատրաստման, առաջադիմության և կարիերայի աճի մասին: Աշխատակիցները ժամանակ առ ժամանակ վերապատրաստվում են, ինչպես նաև մասնակցում են տարբեր սեմինարների ու կոնֆերանսների:

Աշխատակիցների համար առողջ աշխատանքային մթնոլորտի ապահովումը ընկերության առաջնահերթություններից է: Աշխատակիցներն էլ իրենց հերթին աչքի են ընկնում պրոֆեսիոնալիզմով, թիմային ոգով, պատասխանատվությամբ, ինչպես նաև իրենց գիտելիքները միմյանց հետ փոխանակելու պատրաստակամությամբ:

Ռիսկերի կառավարում

Ընկերության ռիսկերի կառավարման գործընթացում ընդգրկված են բոլոր աշխատակիցները՝ վերից վար (top-down) մոտեցմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Ընկերության նպատակներին համահունչ, և հետապնդում է Ընկերությանը գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերից զերծ պահելու նպատակը: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասը:

Ռիսկերի ամենօրյա կառավարման գործառույթն իրականացվում է ընկերության Գործադիր տնօրենի կողմից: Գործադիր տնօրենն օրական հետևում է շուկայական զարգացումներին, հավաքագրում և ուսումնասիրում է տարբեր տեղեկատվական հոսքերից եկող ազդակները, ինչի արդյունքում ձևավորվում է ամբողջական պատկեր ռիսկերի կառավարման ճշգրիտ գործառույթների իրականացման համար:

Կարևորելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործողությունները՝ Ընկերությունը շարունակում է զարգացնել և բարելավել ներդրված գործառույթներն այս ոլորտում: Ընկերությունում իրականացվում են ներքին սեմինարներ ՓԼ/ԱՖ կանխարգելման թեմայով, որոնք ապահովում են Ընկերության աշխատակիցների իրազեկվածությունը ներքին և օրենսդրական ակտերին:

Գլուխ 3

Ֆինանսական հաշվետվություն

2021

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

Հազար ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	124,267	94,723
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(75,667)	(35,317)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**48,600**	**59,406**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	55,796	31,905
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(21,242)	(15,125)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**34,554**	**16,780**
Զուտ եկամուտ/(ծախս) առևտրային գործառնություններից	(8,014)	27,246
Այլ գործառնական եկամուտներ/(ծախսեր)	36	(1,106)
Գործառնական եկամուտներ	**75,176**	**102,326**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	1,990	1,430
Ընդհանուր վարչական ծախսեր	(47,564)	(47,602)
Այլ գործառնական ծախսեր	(9,124)	(6,743)
Շահույթ մինչև հարկումը	**20,478**	**49,411**
Շահութահարկի գծով ծախս	(5,856)	(18,049)
Տարվա շահույթ	**14,622**	**31,362**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս	14,622	31,362
Չվերահսկվող բաժնեմաս	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
«Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	(41,747)	(27,045)
Այլ համապարփակ եկամուտների վերադասակարգում շահույթին կամ վնասին	(192)	(1,184)
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ	7,220	15,459
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**(34,719)**	**(12,770)**
Համապարփակ ֆինանսական արդյունք	**(20,097)**	**18,592**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս	(20,097)	18,592
Չվերահսկվող բաժնեմաս	-	-
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0.369	0.792
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	0.369	0.792

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական վիճակի մասին

Հազար ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ակտիվներ		
Պահանջներ բանկերի նկատմամբ	24,509	26,832
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	6,955	3,638
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	1,248,006	973,910
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ	142,085	142,359
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	9,959	16,752
Հետաձգված հարկային ակտիվներ	9,218	2,340
Այլ ակտիվներ	157,088	375
Ընդամենը ակտիվներ	**1,597,820**	**1,166,206**
Պարտավորություններ		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	1,101,055	635,720
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,519	276
Պահուստներ	1,487	1,916
Այլ պարտավորություններ	14,887	30,518
Ընդամենը պարտավորություններ	**1,119,948**	**668,430**
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	395,840	395,840
Էմիսիոն եկամուտ	8,346	8,346
Գլխավոր պահուստ	4,700	212
Չբաշխված շահույթ	102,048	91,942
Սեփական կապիտալի այլ տարրեր	(33,062)	1,436
Ընդամենը սեփական կապիտալ	**477,872**	**497,776**
Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ	477,872	497,776
Փոքրամասնության բաժնեմաս		
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**1,597,820**	**1,166,206**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի մասին

Հազար ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված տոկոսներ	125,686	78,079
Վճարված տոկոսներ	(74,280)	(35,833)
Ստացված կոմիսիոն գումարներ	44,706	30,193
Վճարված կոմիսիոն գումարներ	(19,914)	(18,869)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(33,350)	(27,360)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(157,225)	(13,989)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(114,377)**	**12,221**
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում), այդ թվում՝	(322,848)	388,129
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» և «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)	(322,848)	388,129
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**(437,225)**	**400,350**
Վճարված շահութահարկ	(19,234)	(5,251)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**(456,459)**	**395,099**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում / կապիտալացում	(1,740)	(1,895)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	200
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	**(1,740)**	**(1,695)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Ստացված փոխառությունների ավելացում/(նվազում)	463,554	(424,411)
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում	-	47,986
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի վճարում	(6,210)	(5,191)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	**457,344**	**(381,616)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,468)	2,595
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(855)**	**11,788**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	26,832	12,449
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**24,509**	**26,832**

DIMENSION
INVESTMENTS

Ֆինանսական և ներդրումային ծառայությունների նոր ձևաչափ

Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթի-ուրբաթ, 9:00-18:00
Հասցե. ք. Երևան, Բաղրամյան 2, 6-րդ հարկ, 27/1
Հեռ. (010) 54 56 70
Էլ. փոստ. info@dimension.am
Էլ. կայք. www.dimension.am